մահուան պատժի ենթարկեց Ֆաթալի խանը[1]) որովհետեւ մասնակցել էին պատերազմի մէջ, որ տեղ և դերի ընկան. մահուան պատիժը կատարուեցաւ Մելիք Մահմէդ խանի ձեռքով։

Մելիք Մահմէդ խանը իւր հօր օրինակին հետեւելով ուղեւորուեց Իմամի գերեզմանին Քերբալայում երկրպագելու, որ տեղ և մեռաւ 1781 թուին, նորա որդի Միրզա Մահմէդ խանի անչափահասութեան պատճառով, հանգուցեալի կինը Ֆաթմա Սուլթան Բեհմեան յայտարարեց իրան ժամանակաւոր փոխանորդ խանի, բայց չունենալով կառավարչի յատուկ ընդունակութիւններ՝ նա ղեկավարեց մի միայն մի քանի ամիս, և որովհետեւ ժողովրդի կողմից նորա դէմ տրտունջներ բարձրացան, ուստի իւր անչափահաս որդու հետ միասին Շեխ Ալի խանը կանչեց նորան Ղուբայ։

Մահմէդ Ղուլի խանը՝ մելիք Մահմէդ խանի կրտսեր եղբայրը նոյն Շեխ Ալի խանի տնօրինութեամբ սկսեց կառավարել խանութիւնը։

Նա ըստ վկայութեան հին բնիկների արժանաւոր յաջորդ էր իւր նախորդների, ունէր առողջ և լուսաւոր խելք. սիրում էր արդարութիւնը, արհամարհում էր կեանքի մէջ շռայլութիւնը, աշխատում էր ժողովրդի մէջ մացնել լաւագոյն կարգեր, որ խախտուած էին կին կառավարչուհու ժամանակ, ձգտում էր բաւարարութիւն տալ ժողովրդի կարիքներին։ Սակայն երկու տարուայ ժողովրդին անմոռանալի կառավարութիւնից յետոյ, մեռաւ անզաւակ 1784 թ.։

Նոյն թուին Բագուայ ժողովուրդը ցանկանալով ազատուել Ղուբայի Շեխ Ալի խանի կամայականութիւնից և խնամակալութիւնից՝ ընտրեց և հրաւարակեց Հուսէյն Ղուլի խանին Բագուայ խան։

Հուսէյն Ղուլի խանը վերեւ յիշած Ալի Ղուլի խանի (Մելիք Մահմէդ խանի միւս եղբայրը) որդին էր։ Նոր խանը լիովին արդարացրեց ժողովրդի յոյսերը. սա լաւ գիտէր որ իւր խանու-

---

[1])Դէրբէնդի պատմութեան (Դէրբէնդ նէմէ) ասելով Ֆաթալի խանը թագուած է Բագու քաղաքում պարսից 1202 թուին (յերես 15)։